



Արձանագրություն Յուրանոցների, Յուրատների և Կարճաժամկետ Վարձակալությամբ Գիշերակացի Հաստատությունների Վերաբերյալ. Հավելված P

Վերջին թարմացումները. (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

1/28/2021. Յուրանոցները, Կացարանները և Կարճաժամկետ Վարձույթով տարածքները կարող են վերաբացվել արտանահանգային ամրագրումների համար ոչ կարևոր ուղևորությունների համար:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է փոփոխյալ մոտեցում, հիմնվելով գիտական և հանրային առողջապահական փորձաքննության վրա, թույլատրելու որոշ բիզնեսների վերաբացումը: Ստորև ներկայացվող պահանջները վերաբերում են հյուրանոցներին, հյուրատներին և կարճաժամկետ գիշերակացի հաստատություններին, որոնց այժմ թույլատրվել է վերաբացվել:

Յուրանոցները և գիշերակացի հաստատությունները, որոնք հանդիպումների, բանկետների, ժողովների մեծ սրահներ ունեն, եթե կիրառելի է, պետք է այս տարածքները պահեն փակ, մինչև Առողջապահության Դատասխանատուի հրամանով կթույլատրվի վերսկսել այդ հաստատություններից յուրաքանչյուրի մասնակի կամ լիարժեք շահագործումը:

Զանի որ փակ տարածքներում տեղի ունեցող գործողությունները COVID-19-ի փոխանցման ավելի մեծ վտանգ են պարունակում՝ հատկապես վատ օդափոխություն ունեցող տարածքներում, կարևոր է, որպեսզի հաստատությունները ապահովեն, որ պահպանվի համապատասխան ֆիզիկական հեռավորություն, անձնակազմը և հաճախորդները ամբողջ ընթացքում կրեն դիմակներ, պահպանվի ձեռքերի խիստ հիգիենա, շարունակվի իրականացվել հաստատության ընդլայնված մաքրում և ախտահանում, ինչպես նաև օպտիմալացվի օդափոխության համակարգը:

Սպա ծառայությունները, ներառյալ՝ մերսում, դեմքի և մարմնի խնամքի և մատնահարդարման սրահները, կարող են բացվել ներսում ծառայություններ մատուցելու համար: Անհատական խնամքի բոլոր ծառայությունները պետք է հետևեն [Անհատական խնամքի Ծառայությունների](#) համար հրապարակված արձանագրություններին: Փակ լողավազանները, շոգեբաղնիքները, սաունաները և տաք լոգարանները պետք է մնան փակ: Փակ տարածքների խաղահրապարակները պետք է մնան փակ: Բացօթյա խաղահրապարակները կարող են բացվել՝ համաձայն հանրային առողջապահության կողմից հրապարակված [խաղահրապարակների](#) ուղեցույցի:

Սեփականության ղեկավարները, մասնակի իրավունքով շահագործողները և այլ վարձակալական սենյակների սեփականատերերը և շահագործողները իրավունք ունեն վարձակալել միայն չբնակեցված սենյակներ և իրավունք չունեն վարձակալելու բնակեցված վայրի ներսում գտնվող սենյակները կամ տարածքները՝ մինչև նոր տեղեկություն ստանալը: Բնակելի տարածքը կամ սենյակը, որը վարձակալվել է՝ առանց տիրոջ ֆիզիկապես ներկա գտնվելու, կամ ունի առանձին արտաքին մուտք և ելք, որը չի պահանջում ընդհանուր տարածքների օգտագործում, կամ այլ կերպ է բնակեցված, պետք է համարվի չբնակեցված սենյակ:

Յուրանոցներին և գիշերակացի հաստատություններին վերաբերվող հավելյալ արձանագրությունների պահանջներին պետք է հետևեն նույնպես.

- Ռեստորանները և բարերը
- Ֆիթնես Հաստատությունները
- Հանրային Լողավազանները
- Մանրածախ Վաճառքը
- Գրասենյակային Տարածքները
- Գոլֆի Խաղադաշտերը
- Անհատական խնամքի Ծառայությունները
- Բացօթյա Խաղահրապարակները

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել՝ կախված լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելիությունից, ուստի անպայման պարբերաբար ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>՝ այս փաստաթղթի թարմացումներին հետևելու համար:



Այս ստուգաթերթը ներառում է՝

- (1) Աշխատավայրերի ուղեցույցներ և գործելակերպեր՝ ուղղված աշխատակիցների առողջության պահպանմանը
- (2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկումն ապահովող միջոցառումներ
- (4) Աշխատակիցների և հանրության հետ հաղորդակցություն
- (5) Կարևոր ծառայությունների անաչառ հասանելիության միջոցառումներ

Պետք է անդրադառնալ այս հինգ հիմնական ոլորտներին, եթե ձեր հաստատությունը մշակի վերաբացման արձանագրություններ:

Սույն արձանագրությունում ընդգրկված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:

Բիզնեսի անուն՝ _____

Հաստատության հասցե՝ _____

Առավելագույն տարողությունը՝
ըստ Հրդեհային Օրենքի (Fire Code)՝ _____

Հանրության համար բաց մտավոր
ընդհանուր քառակուսի ոտնաչափ
տարածք՝ _____

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԲՈՒՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

- Բոլոր նրանց, ովքեր կարող են իրենց պարտականությունները կատարել տնից, պետք է հանձնարարվի անել այդպես:
- Խոցելի աշխատակիցներին (65-ից բարձր տարիքի և խրոնիկական հիվանդություններ ունեցողներին) հնարավորության դեպքում հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը հնարավոր է կատարել տնից, և նրանք պետք է խորհրդակցեն իրենց բուժաշխատողի կամ մասնագիտացված առողջապահական ծառայությունների հետ՝ աշխատավայր վերադառնալու վերաբերյալ ճիշտ որոշումներ ընդունելու համար:
- Բոլոր աշխատակիցներին ասվել է հիվանդ ժամանակ կամ, եթե շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ, չգնալ աշխատանքի:
- Աշխատակիցներին տրամադրվում է տեղեկություն գործատուի կամ պետության կողմից հովանավորվող բացակայության նպաստների վերաբերյալ, որոնք աշխատակիցը միզուցե իրավունք ունենա ստանալու, ինչը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկությունները՝ [հիվանդության հետևանքով բացակայությունների աջակցության պետական ծրագրերի և COVID-19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների](#), ներառյալ՝ աշխատողների հիվանդության հետևանքով բացակայությունների իրավունքները [Ընտանիքների կողմից Կորոնավիրուսի առաջին արձագանքի Ակտի](#) և աշխատողների փոխհատուցման նպաստների իրավունքները և աշխատանքի հետ կապված COVID-19-ի ենթադրությունը՝ համաձայն Նահանգապետի [N-62-20 Գործադիր հրամանի](#):
- Տեղեկանալով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի արդյունքը դրական է, կամ նրանք ունեն COVID-19-ի ախտանիշների հետ համընկնող ախտանիշներ (հիվանդ), գործատուն պետք է պատրաստի ծրագիր ունենա, որով «հիվանդ(ներ)ը» [հնքնամեկուսանան տանը](#), ինչպես նաև պետք է պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես [հնքնակարանտինի ենթարկվեն](#): Գործատուի ծրագիրը պետք է ներառի արձանագրություն, որով կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցները կթեստավորվեն, կամ նրանց հասանելի կլինի COVID-19-ի թեստավորումը՝ պարզելու, թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝ Հանրային Առողջապահության ուղեցույցը [Աշխատավայրում COVID-19-ի արձագանքման վերաբերյալ](#):



- ❑ Աշխատավայրում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի վարակման դեպքեր բացահայտելու դեպքում, գործատուն պետք է գեկուցի այս խմբի վերաբերյալ Հանրային Առողջապահության Վարչությունը՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով, կամ առցանց՝ հետևյալ հասցեով՝ www.redcap.link/covidreport: Եթե աշխատավայրում վարակված խումբ հայտնաբերվի, Հանրային Առողջապահության Վարչությունը կնախաձեռնի խմբի նկատմամբ արձագանք, որը ներառում է վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Վարակված խմբի հետազոտման գործով կնշանակվի Հանրային Առողջապահության հատուկ աշխատակից՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- ❑ Իրականացվում են [աշխատակիցների ստուգումներ](#)՝ նախքան աշխատակիցներին կրոնյատրվի աշխատավայր մտնել՝ համաձայն Հանրային Առողջապահության Վարչության [Մուտքի Ստուգումների Ուղեցույցի](#): Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անհատը գտնվում է ընթացիկ մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանման պահին: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- ❑ Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է դեմքի ծածկոց, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դեմքի ծածկոցը որչ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի ծածկոցներ, [պետք է](#) կրեն ներքևի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կգակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները [չպետք է](#) օգտագործվեն: Բոլոր աշխատակիցները պետք է դեմքի ծածկոցներ կրեն, բացառությամբ այն պահերին, երբ միայնակ աշխատում են անհատական գրասենյակներում, որոնց դռները փակ են, կամ երբ ուտում կամ խմում են: Նախկինում հրահանգված բացառությունը, որը նախատեսված էր աշխատողների հասակը գերազանցող ամուր միջնապատերով խցիկներում աշխատող աշխատակիցների համար, փոխարինվում է՝ մինչև հետագա ծանուցում:
- ❑ Աշխատակիցներին ցուցումներ է տրվել կտորե դիմակների ճիշտ օգտագործման, ինչպես նաև՝ իրենց դիմակները ամեն օր լվանալու կամ փոխարինելու անհրաժեշտության վերաբերյալ:
- ❑ Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին [արգելվում է](#) ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումներին, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը տրամադրում է մյուսներից ավելի շատ հեռավորություն և միջնապատեր: [COVID-19-ի փոխանցումը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունենում, երբ աշխատակիցները լինում են միասին՝ առանց դեմքի ծածկոցներ կրելու:](#)
- ❑ Տարածության զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշելու և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
 - Նշել առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը և
 - Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշելու և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
 - Սեղանները դնել վեց ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կացնել՝ զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակների վրա գծանշումներ դնել՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց այն չպետք է համարվի փոխարինող միջոց՝ զբաղվածության կրճատման և ֆիզիկական հեռավորության պահպանման համար:
- ❑ Սենյակները սպասարկողներին և մյուսներին, ովքեր պետք է մտնեն հյուրերի սենյակները, հրահանգվել է կրել կտորե դիմակներ:
- ❑ Աշխատակիցներին հանձնարարվել է ապահովել ձեռքերի հիգիենան, ներառյալ՝ ձեռքերը հաճախակի լվանալը, ձեռքերի ախտահանիչ միջոցի օգտագործումը և ձեռնոցների ճիշտ կիրառումը:
- ❑ Աշխատակիցներին ժամանակ է տրամադրվում՝ ձեռքերը հաճախակի լվանալու համար:
- ❑ Աշխատակիցներին հիշեցվում է՝ հազալիս և փռչալիս ծածկել դեմքը անձեռոցիկով: Օգտագործված անձեռոցիկը պետք է նետել աղբամանը և անմիջապես լվանալ ձեռքերը օճառով և գոլ ջրով՝ առնվազն 20 վայրկյան:



- Բոլոր աշխատակիցներին, վաճառողներին և առաքիչներին տրվել է ցուցումներ՝ ուրիշների շրջակայքում գտնվելիս ֆիզիկական հեռավորություն պահպանելու և կտորե դիմակներ կրելու վերաբերյալ:
- Աշխատավարձի և ժամային կարգավորումներին համապատասխան՝ ընդմիջումների ժամերը փոփոխվել են, որպեսզի պահպանվի ընդմիջման սենյակներում աշխատակիցների միջև վեց (6) ոտնաչափ հեռավորություն՝ ամբողջ ընթացքում:
- Աշխատակիցները պատշաճ կերպով վերապատրաստվել են COVID-19-ի հետ կապված բոլոր ուղեցույցներով և գործընթացներով:
- Մշակվել է աշխատավայրին առանձնահատուկ COVID-19-ի գրավոր ծրագիր, որը ներառում է ռիսկերի գնահատումը՝ բոլոր աշխատանքային տարածքներում:
- Ծրագիրն իրականացնելու համար նշանակվել է պատասխանատու անձ:
- Աշխատակիցները վերապատրաստվել են մաքրող և ախտահանող ապրանքների ճիշտ օգտագործման, ներառյալ՝ Cal/OSHA-ի անվտանգ օգտագործման պահանջների համար: Աշխատակիցներին տրամադրվում են զոզնոցներ, ձեռնոցներ և այլ պաշտպանիչ միջոցներ՝ կախված ապրանքի օգտագործման պահանջից:
- Ընդմիջումների սենյակները, զուգարաններն ու այլ ընդհանուր տարածքները հաճախակի ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով՝
 - Ընդմիջման սենյակներ _____
 - Չուգարաններ _____
 - Այլ _____
- Ախտահանող և հարակից նյութերը աշխատակիցներին հասանելի են հետևյալ վայր(եր)ում.

- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանման միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝

- Յուրաքանչյուր աշխատակցի բաժանվել է այս արձանագրության կրկնօրինակը:
- Ընտրողական - Նկարագրել այլ միջոցառումներ:

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Իրականացվում են միջոցառումներ՝ ապահովելու առնվազն վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանում աշխատակիցների, հյուրերի և հանրության միջև, ներառյալ՝ այն տարածքներում, որտեղ հյուրերն ու աշխատակիցները շարք են կանգնում:
 - Սա ներառում է ֆիզիկական միջնապատերի կամ տեսողական ցուցանակների կիրառումը (օր.՝ հատակի վրա նշումներ կամ նշաններ, որոնք ցույց են տալիս, թե որտեղ պետք է աշխատակիցները և/կամ հյուրերը կանգնեն):
 - Սա ներառում է գրանցվելու, դուրս գրվելու, վերելակի նախասրահների, սրճարանների և ճաշարանների, տաքսիների և համատեղ երթևեկելու հերթերը:
 - Գործարքների բոլոր սեղանների մոտ, որտեղ հնարավոր չէ պահպանել 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն աշխատակիցների և հյուրերի միջև, տեղադրված են ֆիզիկական պատնեշներ:
- Հյուրերը ներս են մտնում դռներից, որոնք կամ մշտապես բացված են, ավտոմատացված են, կամ բացում է աշխատակիցը, ով հաճախակի լվանում է ձեռքերը և/կամ օգտագործում է ձեռքերի ճիշտ ախտահանման միջոց:
- Կիրառվում են զբաղված ժամանակահատվածների հերթագրման ընթացակարգեր, ներառելով՝ նախասրահում ողջունող աշխատակցի ներկայություն՝ անհրաժեշտության դեպքում: Հյուրերին պահանջում են շարք կանգնել՝ խմբերի միջև պահպանելով առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:
- Հանրային վայրերի ամբողջ կահույքը դասավորվել է այնպես, որ պահպանվի սոցիալական հեռավորության պահանջները:
- Ֆիզիկական հեռավորության պահպանման միջոցառումներն իրականացվում են աշխատակիցների ընդմիջումների սենյակներում, համագեղատների վերահսկման սենյակներում, վերապատրաստման դասասենյակներում, ընդհանուր գրասենյակային տարածքներում, աշխատակիցների ծառայությունների պատուհանի մոտ և այլ բարձր խտությամբ տարածքներում՝ աշխատակիցների միջև պատշաճ կերպով հեռավորություն պահպանելու համար:
 - Հնարավորության դեպքում, տրամադրվում են բացօթյա ընդմիջման տարածքներ՝ արևապաշտպան ծածկերով և նստարաններով, որոնք ապահովում են աշխատակիցների միջև ֆիզիկական հեռավորության պահպանումը:



- Հյուրերի սենյակի ծառայությունները, լվացքի և չոր մաքրման ծառայությունները և իրերի առաքումը, հնարավորինս իրականացվում է առանց շփման և համաձայն առաքման արձանագրություններին:
- Սենյակների սպասարկման ծառայություններն իրականացվում են միայն այն ժամանակ, երբ հյուրերը ներկա չեն:
- Աշխատակիցների նախա-հերթափոխային ժողովներն իրականացվում են վիրտուալ կարգով, կամ այն տարածքներում, որտեղ հնարավոր է աշխատակիցների միջև պատշաճ ֆիզիկական հեռավորություն պահպանել:
- Աշխատակիցների ժամանելու ժամերը փոփոխվել են՝ նվազագույնի հասցնելու մարդկանց քանակը շենքի հետևի միջանցքներում և ծառայողական վերելակներում:
- Աշխատակիցներին չի խրախուսվում բարձր երթևեկության տարածքներում հավաքվելը, ինչպիսիք են՝ լոգարանները և միջանցքները: Հնարավորության դեպքում ստեղծվել են քայլողների համար ուղղորդված միջանցքներ և անցումներ՝ սահմանափակելու մարդկանց միմյանց կողքով անցնելը:
- Գրասենյակային տարածքները, նախասրահները, դիմասրահի գրանցման տարածքները, բիզնես կենտրոնները, դռնապանի սպասարկման տարածքները և այլ տարածքները հնարավորինս վերաձևափոխվել են՝ ապահովելու, որ աշխատավայրերը և հյուրերի տեղավորումը թույլ կտան պահպանելու առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն:
- Ցանկացած վերելակի դեպքում, որը թույլ չի տալիս երթևեկողների միջև 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանում, միաժամանակ երթևեկելու կարողությունը սահմանափակվում է 4 անձով կամ ընտանիքով: Բոլոր երթևեկողներից պահանջվում է կրել կտորե դիմակներ:
- Աշխատակիցներին հանձնարարվել է խուսափել ձեռք սեղմումներից և նմանատիպ ողջույններից, որոնք խախտում են ֆիզիկական հեռավորության պահպանումը:
- Հնարավորինս սահմանափակվել է անհատական շփումը ֆիզիկական գրասենյակներ ապրանքներ առաքելիս: Խուսափեք ուրիշների գրիչներին և աշխատանքային պարագաներին դիպելուց:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍՎԱՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՔՆԵՐ (ԳՐԱՆՑՄԱՆ, ՆԱԽԱՍՐԱՀ, ՎԵՐԵԼԱԿՆԵՐ, ԵՎ ԱՅԼՆ)

- HVAC (օդափոխիչ) համակարգը աշխատանքային լավ վիճակում է, և օդափոխությունը ավելացվել է հնարավորինս առավելագույն չափով ընդհանուր տարածքներում և հյուրերի սենյակներում: Տե՛ս հանրային առողջապահության [օդափոխության](#) օպտիմալացման ուղեցույցը:
- Կարող եք տեղադրել բարձր արդյունավետության շարժական օդազտիչ սարքեր, արդիականացնել շենքի օդամղիչների ֆիլտրերը ավելի բարձր արդյունավետության ֆիլտրերով, և կատարել այլ փոփոխություններ աշխատանքային բոլոր գրասենյակներում, հյուրերի սենյակներում և այլ տարածքներում՝ արտաքին օդի և օդափոխության քանակն ավելացնելու համար:
- Այն հաստատություններում կամ հյուրասենյակներում, որոնք չեն շահագործվել, մինչ վերաբացվելը՝ հինգ րոպե տևողությամբ բաց թողեք տաք և սառը ջրի ծորակները, որպեսզի հաստատության ջրամատակարարման համակարգում մնացած հին ջուրը փոխարինեք մաքուր և անվտանգ ջրով:
- Մաքրող և ախտահանող ապրանքատեսակները, որոնք ըստ [Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության \(EPA\) հաստատված ցուցակի](#) արդյունավետ են COVID-19-ի դեմ, կիրառվում են համաձայն արտադրողի ցուցումներին:
 - N ցուցակից ընտրվում են այն ախտահանիչ ապրանքները, որոնք պարունակում են ասթմա ունեցողների համար անվտանգ բաղադրիչներ:
- Հաճախորդները պետք է ներս մտնեն մշտապես բաց, կամ հնարավորության դեպքում՝ ավտոմատ բացվող դռներով:
- Իրականացվում են ախտահանիչների ստուգումներ, նախքան այցելուներին կամ հյուրերին կառավարվող աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հագի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցի դիտարկում, SARS-CoV-2 վիրուսի համար վերջերս կատարված դրական թեստ, և արդյոք հյուրը ներկայումս գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների տակ: Այս ստուգումները կարող են կատարվել անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված [նշաններով](#).
 - Այս հարցերից որևէ մեկին դրական պատասխանող այցելուները չպետք է մուտք գործեն տարածք: Դրականորեն պատասխանող հյուրերին պետք է կարգադրություններ տրվեն՝ սահմանափակվել մնալով իրենց սենյակում, և որ նրանք չպետք է օգտագործեն ընդհանուր տարածքները:
 - Հյուրերը, ովքեր դրական պատասխան են տալիս, կարող են վերագրանցվել հյուրանոցների ավելի հեռավոր տարածքում գտնվող սենյակներում, որոնք նախապես ընտրվել են այդպիսի հյուրերի օգտագործման համար: Հյուրանոցները խրախուսվում են լրացուցիչ ծառայություններ առաջարկել ցանկացած մեկուսացող կամ կարանտինի մեջ գտնվող հյուրերին, ինչպիսիք են ամենօրյա առողջության ստուգումները



հեռախոսով, սենյակային սպասարկումը և հավելյալ դռնապանի օգնություն, որը թույլ կտա հյուրին մնալ իր սենյակում:

- Հյուրերին ծանուցվում է, որ եթե հիվանդանան, կամ այլ կերպ վարակվեն COVID-19-ով, կամ իրենց մնալու ընթացքում ենթարկվեն COVID-19 առաջացնող վիրուսին, նրանք պետք է այդ մասին տեղեկացնեն հյուրանոցի ղեկավարությանը: Նրանք պետք է մեկուսանան, կամ կարանտին պահեն իրենց սենյակում և հեռու մնան ընդհանուր տարածքներից: Նման հյուրերին պետք է առաջարկել լրացուցիչ ծառայություններ՝ իրենց սենյակում մնալը և ընդհանուր տարածքներ դուրս չգալը հեշտացնելու համար:
- Ձեռքերի ախտահանիչների դիսպենսերները (հնարվորինս՝ առանց հպման) տեղադրված են հյուրերի և աշխատակիցների հիմնական մուտքերի մոտ և շփման տարածքներում, օրինակ՝ ավտոճանապարհներին, ընդունելությունների վայրերում, հյուրանոցների նախասրահներում, ռեստորանների մուտքերում, հանդիպումների և ժողովների տարածքներում, վերելակների մոտ, լողավազաններում, սրահներում և մարզվելու տարածքներում:
- Հաստատություն ժամանող հյուրերին և այցելուներին հիշեցնում են, որ հաստատությունում կամ դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում հարկավոր է դեմքի ծածկոցներ կրել (բացառությամբ՝ ուսելիս կամ խմելիս, եթե կիրառելի է): Սա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձիք, ով բուժաշխատողը հրահանգել է չկրել դեմքի ծածկոց, ազատվում են այս պահանջից: Ձեր աշխատակիցների և այլ հյուրերի անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դեմքի ծածկոցներ տրամադրել այն հյուրերին, ովքեր գալիս են առանց դրանց:
 - Այն հյուրերը և այցելուները, ովքեր կիրառվեն կտորե դիմակ կրել, չեն սպասարկվի, և նրանց կխնդրվի հեռանալ:
- Երեխաների հետ եկած հաճախորդները պետք է ապահովեն, որ իրենց երեխաները մնան ծնողի կողքին, խուսափեն դիպչելուց որևէ այլ անձի կամ որևէ իրի, որն իրենց չի պատկանում, և եթե տարիքը թույլ է տալիս, կրեն դեմքի ծածկոցներ:
- Մատուցողները, մաքրողները և այլ աշխատակիցները, ովքեր տեղափոխում են հաճախորդների օգտագործած պարագաները (կեղտոտ բաժակներ, փխսենք, անձեռոցիկներ և այլն) պետք է կրեն մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ՝ նախքան դրանց հետ աշխատելը:
- Խրախուսվում են առանց կանխիկի գործարքները: Եթե կիրառելի է սննդի հաստատության համար, հաճախորդներին հնարավորություն է տրվում ինքնուրույն սահեցնել իրենց վարկային/դեբիտ քարտերը, և քարտերը կարդացող սարքերն ամբողջովին ախտահանվում են յուրաքանչյուր հյուրի օգտագործելուց հետո:
- Ընտրողական - Նկարագրեք այլ միջոցառումներ (օր.՝ միայն մեծահասակներին սպասարկելու ժամեր սահմանելը, ոչ զբաղված ժամերի վաճառքի խրախուսումը):

- Հնարավորինս կիրառվում է առանց շփման համակարգ՝ գրանցման, վճարման, սենյակ մուտք գործելու, կամ հատուկ խնդրանքների համար:
 - Բանալի-քարտերն ախտահանվում են յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Հնարավորության սահմաններում, հյուրանոցի հյուրերը հաշվառվում են հյուրերի մատյանում, որում ներառվում են հյուրի անունը, հեռախոսի համարը և էլփոստի հասցեն, որը կարող է կատարվել նաև գրանցման պահին:
- Հեռախոսները, պլանշետները, նոութբուքերը, գրասեղանները, գրիչները և այլ աշխատանքային պարագաները մաքրվում և ախտահանվում են յուրաքանչյուր հերթափոխից առաջ, ընթացքում և հետո, կամ ամեն անգամ, երբ սարքավորումը հանձնվում է այլ աշխատակցի: Սա ներառում է նաև հեռախոսները, ռադիոները, համակարգիչները և կապի այլ սարքերը, վճարման տերմինալները, խոհանոցային սարքավորումները, ինժեներական գործիքները, անվտանգության կոճակները, թղթերը, տևտեսական ապրանքների սայլերը և մաքրման սարքավորումները, բանալիները, ժամացույցները և այլ անմիջական շփման իրերը:
- Աշխատանքային կայաններում, սեղաններին և հյուրերին սպասարկելու սեղաններին տրամադրվում են ախտահանման անհրաժեշտ ապրանքներ, ներառյալ՝ ձեռքերի ախտահանիչ միջոց և ախտահանող անձեռոցիկներ և անձնական օգտագործման ձեռքերի ախտահանիչ միջոցներ՝ անմիջապես հաճախորդներին սպասարկող բոլոր աշխատակիցների համար:
- Փոշեկուլները համալրված են HEPA ֆիլտրերով: Հնարավորության սահմաններում աշխատակիցները պետք է փոշեկուլներ կիրառեն՝ հատակն ավելով ավելի փոխարեն:
- Իրականացվում են լիակատար մաքրում բարձր երթևեկության տարածքներում, ինչպիսիք են՝ հյուրանոցի նախասրահները, դիմասրահի գրանցման սեղանները, զանգերի գրասեղանները, ընդմիջման սենյակներն ու ճաշելու տարածքները, զգեստափոխման տարածքները, բեռնաթափման հարթակները, խոհանոցները, և մուտքի և ելքի տարածքները, ներառյալ՝ աստիճանները, աստիճանավանդակները, բազրիքները և վերելակների կոճակները:
- Հաճախակի օգտագործվող մակերեսները օրվա ընթացքում և երեկոյան մաքրվում և ախտահանվում են, ներառյալ՝ դռան բռնակները, սննդի և սառույցի մեքենաները, լույսի անջատիչները, հեռախոսները, լվացքի մեքենաների և չորանոցների դռները և շահագործման կոճակները, ճամպուրակների սայլերը, միկրոավտոբուսների դռան բռնակները, զուգարանակոնքերը և ձեռքերի լվացման տարածքները:
- Իրենց հերթափոխերի ընթացքում, աշխատակիցներին ժամանակ է տրամադրվում մաքրման



աշխատանքներ կատարելու համար:

- Չեռքով շահագործվող սառույցի մեքենաները փակված են:
 - Սանհանգույցները մաքրվում և ախտահանվում են կանոնավոր կերպով կիրառելով EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներ՝ ըստ արտադրող ընկերության ցուցումների, հետևյալ ժամանակացույցով՝
-
- Աշխատակիցներին հանձնարարվել է չբացել մեքենաների և տաքսիների դռները:
 - Վալետ ծառայության վարորդները, ճամպուրակներ տեղափոխողները և սենյակները սպասարկողները պետք է իրենց հերթափոխերի ընթացքում կանոնավոր կերպով լվանան ձեռքերը և/կամ օգտագործեն ձեռքերի պատշաճ ախտահանիչ միջոցներ:
 - Եթե վալետ ծառայություն է տրամադրվում, ապա այդ ծառայության վարորդներից պահանջվում է կրել դեմքի ծածկոցներ, ձեռնոցներ և հետևել սոցիալական հեռավորության պահպանման պահանջներին:
 - Էլեկտրոնային բանալիները տեղադրվում են պլաստիկ տոպրակների մեջ:
 - Ղեկը, շարժիչը գործի դնող կոճակը, դռների բռնակները, փոխանցման տուփի բռնակները սրբվում են արդյունավետ ախտահանիչ անձեռոցիկներով:
 - Հաճախորդներին տեղեկացվում է վալետ մաքրման և ախտահանման ընթացակարգերի մասին:
 - Եթե տրամադրվում են միկրոավտոբուսներ, դրանք պետք է հետևեն վալետ ծառայությունների պահանջներին, ներառյալ՝ նստելու տարածքների մաքրումն ու ախտահանումը՝ հյուրերի միջև:
 - Հյուրերին խրախուսվում է օգտվել ինքնակայանման տարբերակներից:

ՀՅՈՒՐԵՐԻ ՍԵՆՅԱԿՆԵՐ

- Դռնապաններն ու ճամպուրակներ տեղափոխողները պետք է կտորե դիմակ կրեն և ձեռնոցներ օգտագործեն՝ հյուրերի ճամպուրակների հետ առնչվելիս: Հնարավորության դեպքում, ուղեբեռի առաքումները պետք է տեղադրվեն սենյակում հյուրի կողմից:
- Մաքրման աշխատանքների ժամանակ սենյակները սպասարկող անձնակազմը պետք է նվազագույնի հասցնի հյուրերի անձնական իրերի հետ շփումը:
- Սենյակները սպասարկող աշխատակիցները միացնում են օդափոխման համակարգը և/կամ բացում են պատուհանները, որպեսզի ավելացնեն օդի շրջանառությունը: Տե՛ս հանրային առողջապահության՝ [օդափոխության](#) օպտիմալացման ուղեցույցը:
- Սենյակները սպասարկող աշխատակիցներին հավելյալ ժամանակ է տրամադրվում սենյակները մաքրելու համար՝ հաշվի առնելով պահանջվող նախազգուշացումները և անհրաժեշտության դեպքում՝ թույլ տալու նրանց յուրաքանչյուր հյուրի կացության միջև իրականացնել սենյակների ավելի մանրակրկիտ մաքրում և ախտահանում:
 - Մաքրող անձնակազմին տրամադրվում է մաքրման համար համապատասխան պաշտպանիչ միջոցներ:
- Ամենօրյա մաքրման ժամանակ, սենյակների մակերեսները մաքրվում և ախտահանվում են:
- Խոհանոցային պարագաները, ներառյալ՝ կաթսաները, թավաները և սպասքը մաքրվում և ախտահանվում են բոլոր հյուրերի կացությունների միջև:
- Յուրաքանչյուր հյուրի կացությունից առաջ՝ լվացվում են բոլոր ափսեսները, ներառյալ՝ պահարանում եղածները: Եթե կիրառելի է, կարող եք սպասքը փոխարինել մեկանգամյա օգտագործման ափսեսներով:
- Մեկանգամյա օգտագործման սրճեփերի հետ տրամադրվում են միանգամյա օգտագործման բաժակներ՝ ապակյա բաժակների, սուրճի բաժակների, կամ բազմակի բաժակներով սրճեփերի փոխարեն:
- Հյուրերին հասանելի չեն միևնույն-բարերը: Բոլոր ապրանքները հանված են:
- Ժամանելիս՝ յուրաքանչյուր հյուրի տրամադրվում է սպասքի համապատասխան օճառ և նոր, չօգտագործված սպունգներ, ախտահանող անձեռոցիկներ:
- Խոհանոցային տարածքները և բոլոր սարքավորումները, ներառյալ՝ սառնարանների դարակները, գազօջախները, սրճեփերը, տոստերները, մթերքների դարակները և այլ տարածքները մաքրվում են յուրաքանչյուր հյուրի կացության միջև:
- Սենյակներում չկան լրացուցիչ իրեր, օրինակ՝ ամսագրեր, ճաշացանկեր, տեղական զվարճանքի վայրերի նկարագիրներ, կտրոններ և այլն: Կարևոր տեղեկատվությունը տրամադրվում է մեկանգամյա օգտագործման եղանակներով և/կամ էլեկտրոնային տարբերակով:
- Կեղտոտ անկողնային սպիտակեղենը հեռացնելու համար սպասարկող անձնակազմին հատկացվում են ձեռնոցներ: Կեղտոտ սպիտակեղենը տեղադրվում է մեկանգամյա օգտագործման փակվող պայուսակների մեջ:
- Բոլոր սրբիչներն ու անկողնային սպիտակեղենը յուրաքանչյուր հյուրի կացության ավարտից հետո հանվում և մաքրվում են՝ անկախ այն բանից դրանք օգտագործվել են, թե՛ ոչ:



- Անկողնային սպիտակեղենը և լվացքը հարկավոր է լվանալ բարձր ջերմաստիճանի ռեժիմով և մաքրել համապատասխան [CDC ցուցումներին](#):
- Սպասարկման բոլոր ոչ էական աշխատանքները նախատեսված են իրականացնել այն ժամանակ, երբ սենյակը զբաղեցված չէ: Հնարավորինս կարգավորեք միայն շտապ և հրատապ խնդիրները, ինչպես դա թույլատրվում է գործող օրենքով:
- Հյուրասենյակների համար, որտեղ հյուրը մեկուսանում կամ կարանտին է անցկացնում, անձնակազմին խորհուրդ է տրվում թողնել և հետ վերցնել բոլոր իրերը՝ թողնելով դրանք դռան մոտ, սենյակից դուրս:
- Ցանկացած հյուրի, որը մեկուսանում կամ կարանտին է անցկացնում հյուրասենյակում, հնարավորության դեպքում, ամենօրյա հեռախոսազանգերի միջոցով առաջարկվում է առողջության ստուգում: Եթե այդպիսի հյուրը բժշկական օգնության համար պետք է հեռանա հյուրանոցից, ապա հյուրանոցի անձնակազմը նպաստում է՝ օգնելով հյուրին դուրս գալ այլ հյուրերից հեռու գտնվող տարածքներով:

ՎԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՎԱՐՋԱՎԱՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հնարավորության դեպքում առաջարկվում է ինքնուրույն գրանցում և դուրս գրում:
- Կիրառվում են գրանցման և դուրս գրման ստանդարտ ժամեր, որպեսզի հնարավոր լինի բարելավել մաքրման գործընթացները հյուրերի կացությունների միջև:
- Յուրաքանչյուր հյուրի կացությունից հետո վարձակալվող սենյակը մանրակրկիտ մաքրվում և ախտահանվում է: Սա ներառում է բոլոր հաճախակի հպման տարածքների սրբելը, մաքրումն ու ախտահանումը, ներառյալ՝ մահճակալների ռեյսերը, սեղանները, հեռուստացույցների հեռակառավարման վահանակները, մահճակալների գլուխները, խոհանոցի սեղանները, խոհանոցային սարքավորումները, սառնարանի դռան բռնակները, գազօջախի բռնակները, հայելիները և այլ իրեր:
- Եթե հայտնի էր, որ հյուրը մեկուսանում կամ կարանտին էր անցկացնում սենյակում, թող սենյակը մնա փակ և ազատ 24 ժամ, ապա կատարվի խորը մաքրում, ինչպես նշված է մաքրման մատրիցում. <http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/protection/CleaningMatrix.pdf>:
- Բոլոր թափոնները և աղբը հանվում է հյուրերի կացությունների միջև: Սա ներառում է սառնարանում, սառցախցիկում և պահարաններում մնացած ցանկացած սննդամթերքի հեռացնելն ու թափելը, որոնք հնարավոր է մնացել էին հյուրերից հետո:
 - o Աղբամանների մեջ մեկանգամյա օգտագործման տոպրակներ են տեղադրված:
- Լվացքի զամբյուղները պետք է մաքրվեն և ախտահանվեն ամեն օգտագործումից հետո:
 - o Չամբյուղների մեջ տոպրակներ են հազցված, որոնք կամ մեկանգամյա օգտագործման են, կամ կարող են լվացվել յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Ամբողջ անկողնային սպիտակեղենը հանվում և լվացվում է հյուրերի կացությունների միջև, ներառյալ՝ այն իրերը, որոնք օգտագործված չեն թվում:
 - o Կեղտոտ սպիտակեղենը հանելիս օգտագործեք ձեռնոցներ: Կեղտոտ սպիտակեղենը տեղադրվում է մեկանգամյա օգտագործման, փակվող պայուսակների մեջ:
 - o Ձեռնոցները հանելից հետո՝ անմիջապես ձեռքերը լվացեք օճառով, կամ օգտագործեք ձեռքերի ախտահանիչ միջոց:
- Վարձակալվող սենյակում հավելյալ սպիտակեղեն չի պահվում: Սպիտակեղենը տրամադրվում է միայն ըստ պահանջի:
- Անկողնային սպիտակեղենը և լվացքը հարկավոր է լվանալ բարձր ջերմաստիճանի ռեժիմով և մաքրել համապատասխան [CDC ցուցումներին](#):
- Բոլոր փափուկ մակերեսները մաքրվում են համապատասխան արտադրողի ցուցումների; Սա ներառում է այնպիսի իրերը, ինչպիսիք են՝ գորգերը, անկողինը, վարագույրները և պաստառները:
- Խոհանոցային պարագաները, ներառյալ՝ կաթսաները, թավաները և սպասքը մաքրվում և ախտահանվում են յուրաքանչյուր հյուրի կացությունների միջև:
- Յուրաքանչյուր հյուր ընդունելուց առաջ՝ լվացվում են բոլոր սպասքները, ներառյալ՝ պահարանում եղածները: Եթե կիրառելի է, կարող եք սպասքը փոխարինել մեկանգամյա օգտագործման ամանեղենով:
- Փոշեկուլները համալրված են HEPA ֆիլտրերով: Հնարավորության սահմաններում աշխատակիցները պետք է փոշեկուլներ կիրառեն՝ հատակն ավելով ավելի փոխարեն:
- Չուգարանակոնքերը, ցնցուղները, լոգարանը, լվացարանը, պահարանը և դարակները ցողվում են բազմակի մակերեսների համար նախատեսված և COVID-19- ի դեմ արդյունավետ մաքրող միջոցով: Հայելիները և մնացած ապակեղենը պատշաճ կերպով սրբվում են: Լոգասենյակների հատակները մաքրվում են ավելով և/կամ փոշեկուլով:
- Վարձակալվող սենյակը հագեցված է հավելյալ օճառով, թղթե սրբիչներով, զուգարանի թղթով, ախտահանիչ կյուլթով կամ անձեռնոցիկներով և ձեռքերի ախտահանիչ միջոցով:



- Արտաքին կամ մասնագիտացված մաքրման ծառայություններ մատուցող ընկերությունները, եթե կիրառվում են, պետք է պարբերաբար հաստատումներ տրամադրեն, որ հետևում են մաքրման և ախտահանման ստանդարտներին:
- Հյուրերը տեղեկացվում են մաքրման և անվտանգության աշխատանքների վերաբերյալ նախքան կացությունը, ինչպես նաև կացության ընթացքում՝ ցուցակագրման տարբերակով կամ տեղեկատվական գրքուկի միջոցով:
- Սպասարկման բոլոր ոչ էական աշխատանքները նախատեսված են իրականացնել այն ժամանակ, երբ սենյակը զբաղեցված չէ: Հնարավորինս կարգավորեք միայն շտապ և հրատապ խնդիրները՝ ինչպես թույլատրվում է համապատասխան օրենքով:
- HVAC (օդափոխիչ) համակարգը աշխատանքային լավ վիճակում է: օդափոխությունն ավելացվել է հնարավորինս առավելագույն չափով: Օգտագործվում են բարձր արդյունավետության ֆիլտրեր, որոնք կանոնավոր կերպով փոխվում են: Տե՛ս հանրային առողջապահության [օդափոխության](#) օպտիմալացման ուղեցույցը:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այս արձանագրության պատճենը փակցված է հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Հյուրերին տեղեկացվում են հաստատության քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ մինչև նրանց ժամանելը: Սա ներառում է՝ ախտահանումներ ունեցող հյուրերի համար ամրագրումը չեղարկելու իրավունքը և զրանցման նոր ընթացակարգերը, ֆիզիկական հեռավորություն պահպանելու պահանջները, և սենյակի և ընդհանուր տարածքների մաքրման և ախտահանման ժամանակացույցերը: Նկատի ունեցեք, որ հյուրանոցները խրախուսվում են պատրաստ լինել հյուրընկալելու COVID-19-ով կամ վիրուսի ազդեցությամբ հյուրերի՝ հյուրանոցի հատուկ սենյակներում, և հեշտացնել մեկուսանալու, կամ կարանտին պահպանելու նրանց կարողությունը:
- Նշաններ են տեղադրված, որոնք այցելուներին և հանրությանը հիշեցնում են վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել, կտորե դիմակներ կրել, ձեռքերը լվանալ, կամ ներս մտնելիս ձեռքերի ախտահանիչ միջոց օգտագործել և տանը մնալ, եթե հիվանդ են, կամ COVID-19-ի հետ համընկնող ախտահանումներ ունեն:
 - o Հյուրանոց մտնելիս հյուրերին կտորե դիմակներ կտրամադրվեն, եթե նրանք չունեն:
- Նշաններ են տեղադրված վերելակներում, որոնք երթուղիներին տեղեկացնում են մարդկանց առավելագույն թույլատրելի թիվը և կտորե դիմակներ կրելու անհրաժեշտությունը:

E. ԽԻՍՏ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հաճախորդների համար կարևոր նշանակություն ունեցող ծառայություններն առաջնահերթություն են ստացել:
- Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, դարձել են առցանց:
- Միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի շարժման սահմանափակումներ և/կամ բարձր ռիսկի տակ գտնվող հաճախորդների համար հանրային վայրերում ապահովվի ապրանքների և ծառայությունների հասանելիությունը:

Ցանկացած լրացուցիչ միջոցառումներ, որոնք չեն ներառված վերևում, պետք է նշվեն առանձին էջերում, որոնց բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցերի դեպքում, դուք կարող եք դիմել հետևյալ անձին.

Բիզնեսի անուն՝ _____

Հեռախոսահամար՝ _____

Վերջին վերանայման ամսաթիվը՝ _____